

տարի պէտք էր այսչափ գիրք օրինակելու համար : Իբրեմն աղէկ կ'ընէր առաւելաւս Երուսաղէմն թէ՛ ամէն քան յոսատու է և ամէնայն ինչ յոսատու է ժամանակէն , յարդիքներէն և ինչն իրմէն :

Կը շարունակուի :

Ծաղիկ :

Իսուսաբանք ծաղիկ անունը այնտուն կերուն միայն կը մամնաւորեն որոնք իրենց ծաղկին գեղեցկութեանը համար կը մշակուին , և զարդ և վայելչութիւն են պարտեպներու , ինչպէս մեխակը , կակաջը , հրանունկը , անեմոնը և այլն : Եւրոպայի բնէ շատ աղքատ է գեղեցիկ ծաղկներու կողմանէ , բայց ի մեխակէն որ Իտալիոյ յատուկ ծաղիկն է . իսկ հրանունկը , անեմոնը , յակնթի բազմութիւ տեսակները , նարկիզն ու շուշանը արեւելքէն բերուած բոյսեր են , բայց արհեստով Եւրոպիոյ մէջ հիմա կրկնապատիկ աւելի գեղեցկացած են :

Իմէն ծաղիկ իրեն առանձին հունտն ունի , ուսկից կը ձևանայ իր ցօղունը : Իսոս ցօղունները կամ արմատէ և կամ սոխէ կը սկսին առնուլ իրենց աճումը , որով ծաղիկները գլխաւորապէս երկու կը բաժնուին . մէյմը արմատէ առաջ եկածները , մէյմն ալ սոխէ :

Ծաղիկները բազմացնելու տեսակ տեսակ կերպեր կան , ինչպէս սոխով , մատաղատունկով , հատմամբ , պատուաստով : Եւ որովհետեւ երկայն կ'ըլլայ ամէն ծաղիկ իրեն հունտովն աճեցրնելը , անոր համար այս բանիս այլ և այլ միջոցներ կան . հոս խօսինք նախ ծաղիկ մը հունտէ առաջ բերելու կերպին վրայ :

Իսոյն ամէն հունտերէն որ ձմեռը կը դիմսնան , ոմանք մասնաւոր ածուի մը մէջ կը տնկուին միատեղ , որպէս զի չափաւորապէս մեծնալէն ետեւ ուրիշ տեղ փոխադրուին , ոմանք ալ՝ որովհետեւ ամենադժուարին և կամ անկարելի է

տեղափոխելը՝ անոր համար իրենց յատուկ տեղերը կը տնկուին : Սովորաբար պարտիզպանները այս չորս ամիսներու մէջ կը տնկեն ծաղկի հունտերը , այսինքն փետրուար , մարտ , ապրիլ , մայիս . բայց կան ալ որ բոլոր տարին կրնան տնկուիլ :

Հունտեր տնկելու ածուին մէջ նախ լաւ պարարտութիւն զնելու է՝ վրան կէս ոտնաչափ բարձրութեամբ լաւ մաքրուած պարարտ հին հող . ու թը կամ տասը օր ետքը երբոր այս ածուն կը պատրաստուի , և արեւու ջերմութե սաստկութիւնը կ'անցնի , ան ատեն կըրնան հունտերը ցանուիլ՝ իւրաքանչիւր տեսակը առանձին առանձին որոշելով . ետքը բթաչափ մը թանձրութեամբ հողով ծածկելու է , և մանրամաղ ցընցուղով մը ոռոգել ստէպ՝ եթէ հողը չորնալու ըլլայ : Հունտերը քիչ մը մեծնալէն ետեւ կրնայ մեծ ցնցուղով ալ ոռոգուիլ , ու թէ որ ջրին առատութենէն հողէն դուրս ելլեն մատղաջ ծիկներուն արմատները , քիչ մը հողով վրանին նորէն ծածկելու է : Թի որ եղանակը առաջ գնացած է ու վախ ըլլայ որ ցուրտ գիշերները վնաս մը բերեն , ան ատեն պէտք է վրանին ծածկել : Իսոյ ծածկոցը պէտք է որ քիչ մը բարձր ըլլայ հողուն վրայէն և ամէն կողմանէ լաւ պատսպարուած , որպէս զի ներս սառոյց չմտնայ : Իբրեւ ածուին վրայ զարկած միջոց՝ կրնայ վերցուիլ ծածկոցը , և երբոր արեւն անցնի նորէն գոցելու է . բայց թէ որ սառուցէ վախ չըլլայ գիշերն ալ բաց թողուլը վնաս չբերեր . միայն թէ ուշադիր ըլլալու է աս բանիս , վասն զի երկու ժամուան սառոյցը կրնայ բոլոր հունտերը փձացրնել :

Իբրբոր այս հունտերը կը ծլին ու փոխադրուելու պատշաճ բարձրութեան կը հասնին , որ և իցէ տեղ կրնան տնկուիլ , միայն թէ հողը լաւ ըլլայ և տեղը աղէկ փորուած ու փափկացուցած : Տնկելէն անմիջապէս ետքը ջուր տալու է , և առջի ամիսները գրեթէ ամէն օր՝ եթէ յանկարծ հողը ցամքի ու ան-

ձրև չգայ : Բայց պէտք չէ ածուէն փոխադրել՝ ինչուան որ չափաւոր մեծցած լլլան , ինչու որ կրնան խոտ կարծուիլ ու հանուիլ , որ հաւասարապէս կը բուսնի նոյն ածուին մէջ :

Սաղկի սոխերը սեպտեմբերի սկիզբէն մինչև ապրիլի վերջը կրնան տրնկուիլ , որ է ըսել տարին երկու անգամ , գարնան ու աշնան , կամ մասնաւոր անօթի մը մէջ և կամ գետին . բայց երկու կերպն ալ մի և նոյն հողն ու մի և նոյն խնամքը կը պահանջեն : Առնես մաս մը նոր լաւ հող , մաս մը հին փտտած հող և մաս մ'ալ պարտեզի լաւ հող ու ամէնը մէկէն մաղէ մը կ'անցընես , անանկ որ մէկ ոտք բարձրութիւն ունենայ այս հողս գետնէն , ու հոն կէս ոտք խորութեամբ կը տնկես այս սոխերս . մի և նոյն կերպով պէտք է ընես նաև անօթի մէջ , միայն թէ աս անօթներս պէտք է խոր լլլան և մեծ . բայց սոխերը բոլորովին հողով ծածկելու է , ինչուան ծաղկելու ատեննին մօտենայ : Թէ որ սառոյց չընէ և հողը չոր լլլայ՝ կրնաս երբեմն երբեմն քիչ մը ջուր տալ , իսկ թէ որ սաստիկ սառոյց ընէ՝ չորս մատ թանձրութեամբ հող դեռ աւելցնելու է վրանին և չորս կողմը շրջանակ մը դնելով վրանին խսիր մը ծածկելու է , և երբ արև զարնէ լաւ կ'ըլլայ վերցընելը՝ ու երբ արևն անցնի դարձեալ ծածկելու է : Իսկ թէ որ գարունը չոր երթայ , երբեմն երբեմն ջուր տալու է :

Բուսի մը սովորականէն աւելի աճումն տալու համար պէտք է նոյն բուսին տեսակէն այրել ու մոխրաջուրը ընելով քանի մը անգամ նոյն ջուրը տալ բուսին . այն աղը որ այս մոխրաջուրին մէջ կը գտնուի մեծապէս կ'օգնէ բուսերուն աճմանը՝ առատութեամբ սնունդ ընձեռելով , և այնչափ աւելի որչափ որ այն բոյսը որուն մոխիրը առերես մերձաւոր լլլայ ջուր տուած բուսիդ :

Բայն ծաղկիներուն՝ որ գարնան կամ ամառը ու ձմեռը ջերմանոցի մէջէն կը սկսին բուսնիլ , լաւ կ'ըլլայ որ ստէպ հոգ տարուի վրանին պարարտ սնունդ-

ներով , ջերմութեամբ և կամ ձիու աղբով : Այնպէս շատ օգտակար է ջերմանոցի մէջ տրուած ջուրը՝ շուտով ծաղիկ բանալնուն :

Սարդուս շահասիրութիւն ու հետաքրքրութիւնը մեծապէս նպաստաւոր եղած է այլ և այլ միջոցներ գտնելու գունաւորելու և գեղեցկացնելու համար պարտիզի ծաղկերները , ինչպէս վարդին՝ կանանչ , դեղին ու կապոյտ գոյներ տալ , և դարձեալ քիչ ժամանակի մէջ մեխակը զանազան կերպերով գունաւորել , իրեն բնական գունէն զատ : Այսպիսի հնարքներէն մէկն ալ է , պարարտ հողը լաւ մը արևու տակ փոշիացընել և ունեցած հունտդ այս պարարտ հողին մէջ տնկելէն ետև քսան օրի չափ կարմիր , դեղին և կամ որ և իցէ գունով որ կ'ուզես՝ ջուր տալ , միայն թէ տնկած հունտիդ ծաղկին հակառակ գոյն լլլայ , ապա թէ ոչ օգուտ չընէր , ու կը տեսնես որ ընդհանրապէս տուած ջուրիդ գոյնը կ'առնու տնկած բուսիդ ծաղիկը :

Աղեր են ծաղկադարմանք որ մեխակի ճիւղը պատուաստեր են վայրի եղերգի հին բունին վրայ և վերջը չորս կողմանէ լաւ մաքրուած պարարտութի դրեր են , ու մեծ խնամքով աճեցընելէն ետև , կապտագոյն մեխակ տուեր է որ դժուարագիւտ է : Արիշներն ալ ամենանուրբ և բարակ եղեգի մը մէջ դրեր են այլ և այլ ծաղկի հունտեր , և հողով ու լաւ պարարտութեամբ ծածկելէն ետև՝ այս հունտերուն այլ և այլ ցօղունները մէկ արմատ մը միայն ձևացընելով՝ անկէ այլ և այլ ճիւղեր առաջ եկեր են զանազան ու գեղեցիկ գուններով : Վարձեալ ուրիշ ծաղկադարմաններ ցօղունի մը վրայ պատուաստեր են տարբեր գուններով մեխակի ճիւղեր՝ որոնց ամէնքն ալ իրենց բնական գոյնը պահեր են , որով մէկ գեղեցիկ արմատ մը ձևացեր է բազմաթիւ գուններով :

Արիշ շատ տեսակ կերպեր կան ծաղիկները գունաւորելու , որ ծաղկադարմաններուն առանձին ինքնահնար

գիւտերն են, որոնք փորձով կրնան ստա-
ցաիլ 1

Սաղկի մը հունան ամենելու համար
ամենէն զօրաւոր ճիւղը կը թողուն ու
մնացածները կը կտրեն, երբոր ազէկ մը
հասուննայ խնամքով կը ժողվեն և կը
պահեն աշնանային յարմար եղանակին
տնկելու համար. բայ ի շահպարակէն
և անեմանէն, որոնց հունտը անմիջա-
պէս ժողվելէն ետքը կը տնկուին,
հունտերուն մէջ ազէկը գէշէն զաւե-
լու համար ջուրի մէջ կը ձգուի և ա-
նոնք որ ջուրին վրան կը մնան բանի չեն
գար, իսկ ընտիրները ջուրին տակ կ'իջ-
նան: Վարձեալ հունտերը հողի մէջ
ցանելէն ետև որպէս զի հողին մէջ
գանուող մանր կենդանիներէն չուտուին՝
նախ որմզգասէր 2 ըսուած մշտադա-
լար բուսով պատրաստած հեղանիւթի
մէջ կը թաթխուին ու վերջէն պարարտ
հողի մէջ կը տնկուին, վերի ըսուած
կերպով:

Այն սօխերը որ հունտէ առաջ կու
գան երկու տարուընէ առաջ չեն տե-
ղափոխուիր, իսկ երրորդ տարին լա-
կըլայ փոխադրելը նոր ու փափուկ հո-
ղի մէջ, և նոյն տարին ծաղիկ կու տան:
Այն ծաղկները որ ձմեռուան ցուր-
տին չեն գիմանար, պէտք է արևագէմ
Ջերմանոցներու մէջ ամփոփել, իսկ ընդ-
հակառակն ամառն ալ այնպիսի տեղ
դնել ուր արևը սաստիկ չգարնէ:

Չմեռուան մէջ ծաղկները ամենա-
քիչ ջրոյ կարօտութիւն ունին, և թէ
որ չափաւորապէս ալ ջուր տրուի՝ պէտք
է ուշագրութիւն դնել որ արևուն եւ-
լելէն քանի մը ժամ վերջն ըլլայ և ոչ
երբէք երեկոյեան միջոց, վասն զի հո-
ղին բարեխառնութիւնը տառի աստի-
ճան ըլլալով սպահովապէս՝ գիշերը որ
աւելի ցուրտ կ'ընէ՝ կը փձանայ բոյսը:
Վարձեալ խնամք ունենալու է ջուր
տալու ատեն չթրջել բոյսերը, այլ
միայն արմատը. ընդհակառակն ամառը
պէտք է իրիկունները արևը մանելէն
ետև ջուր տալ բուսերուն և ոչ երբէք
առաւօտները, որովհետև արևուն ջեր-

1 Գ. յ. Joubarte.

մութիւնն ջուրը տաքցընելով, հողն ալ
կը տաքնայ և բոյսը կը թափուի ու ին-
չուան կրնայ նաև չորնալ:

Տարւոյն մէջ ամէն եղանակ իրեն
մասնաւոր ծաղկներն ունի, որ պարտի-
զի մը մէջ հետզհետէ զիրար կը փո-
խանակեն. այն ծաղկները որ գարնա-
նային են, ու մարտ, ապրիլ, մայիս ա-
միսներուն մէջ մեր պարտէզները կը
զարդարեն, են կակաջ վաղահաս, անե-
մոն, հրանունի, նարգէս, յակինթ, աստ-
զածաղիկ, հիրիկ, նարկիզ, թագ ար-
քունի 1, արջունկն 2, շահպարակ, վարդ,
մանիշակ, շուշան հովտաց, մարգարիտ,
գարնանածաղիկ, և այլն:

Ամառը, այսինքն յունիս, յուլիս և
օգոստոս ամիսներուն մէջ կը ծաղկին
կակաջ անագան, շուշան սպիտակ՝
նարնջագոյն, արջտակ 3, օրագուարձ 4,
պենոնիկ, զանգիկ, կանթեղխոտ 5, մե-
խակ զանազան, շահպարակ գեղին,
շահպարակ Անգլիոյ, ոտն արտուտի 6,
դիփնածաղիկ, հարմուկ, մեկոն կամ
խաչխաչ, ոահան, և այլն:

Աշնանային ծաղկները որ սեպտեմ-
բեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսնե-
րը կը ծաղկին՝ են քրքում, խողաբուտ 7,
արևադէմ 8, անթառամ աղուխապի 9,
հնդկային մեխակ, հինածաղիկ, աշնա-
նածաղիկ, հնդկային վարդ, դաժանա-
բոյս 10, գրէ 11 պսակազարդ, կենդանա-
բեր 12 մանանեխ, առիւծորկոր 13, տուղտ,
և այլն:

Չմեռնային ծաղկները որ գեկտեմ-
բեր, յունուար և փետրուար ամիսնե-
րը կը ծաղկին՝ են խողաբուտ ձմերա-
յին, յակինթ ձմերային, անեմոն պարզ,

1. Գ. յ. Couronne imperiale.

2. Գ. յ. Oreille d'ours.

3. Գ. յ. Tubéreuse.

4. Գ. յ. Fleur d'un jour.

5. Յ. Աύκωγ.

6. Գ. յ. Pied d'alouette.

7. Գ. յ. Pain de pourceau.

8. Լ. յ. Solsequium.

9. Գ. յ. Queue de renard.

10. Լ. յ. Stramonium.

11. Գ. յ. Geranium couronné.

12. Գ. յ. Valériane.

13. Գ. յ. Gueule de lion.

սպիտակ մանուշակ, նարկիզ պարզ,
բրբում գարնանային, լերդախոտ¹ և
այլն:

Ի ճաղիկն:

Պաղիկ չըքնաղ և մենուկ,
Պարծանք երբեմին հովտիս,
Լսում ընդ երկիր չարաշուք
Ձըրձին նըշխարքդ 'ի հիւսիս:

Ի նոյն հընձիմք գերանդի,
Ի նոյն ընկձեալք 'ի աեաունէ,
Տերև մ'ի քէն թօթափի
Հէշտ մ'առ 'ի մէջ հրաժարէ:

Յուզւոջ դիպեալ երէկ գեռ
Վեզ օրհորդըն հովիւ,
“Ո՛վ այգածին դուստր, ասէր,
“Դու պճնեսցես զիս վաղիւ,”:

Ը՛յլ դու յանօրրդ ծըղիկ
Խամրեալ յուշիկ նուաղեցար,
Եւ հովուհոյ մըտերմիկ
Վեզ եկն 'ի յայց վայրապար:

Ի բաց դառնայ լալագին:
“Սփոփեաց հովիւ գեղեցիկ:
“Իեռ շընչէ քոյ սիրուհին,
“Կորուսեր լոկ ըզժաղիկ,”:

Ո՛հ, և իմ մորձ սիրուհի
Իբր հովանի անց գընաց,
Կենաց իմոց քաղցուենի
Ը՛րդ սոսկ երազ սին մընաց:

Եր նա չըքնաղ և սիրուն,
Եւ ջընջեցան տիպքըն լոյս,
Եւ 'ի քնարանըս նորուն
Երկես ել խոտ նորաբոյս:

Յայս բան՝ զուղին թաւոստեայ
Յառաջ վարեմ միւսանգամ,

1. Գ. Պ. Hépatique.

Եւ սիրուհոյս ձայնն ահա
Եթէ “Սպասեալ քեզ մընամ,”:

ՄԻԼՎՈՒՄ:

Յովակիմ Միքրա:

Վախընթաց թերթերէն մէկուն մէջ
Սեծին Վաբողենի զօրավարաց մէ-
կուն վարքը դրեր էինք, վստահ ըլլա-
լով որ հաճոյական գործք մը ըրած կ'ըլ-
լանք մեր ընթերցողաց, ուստի այս ան-
գամ ալ իր բազմաթիւ զօրավարներէն
ուրիշի մը վարուց պատմութիւնը կը
գնենք, որ քան զառաջինը աւելի զարմա-
նալի է իր ծննդեամբը, նախանձելի
իր բաղդաւոր ընթացքին մէջ, որով և
մեծապէս աւաղելի իր թշուառ վախ-
ճանովն, որ կարծես թէ այսպիսի կար-
գէ դուրս բախտաւորաց ճակատագիրն
է: Եւ է այս Վեպոլտոյ թագաւորը
և փեսայ Սեծին Վաբողենի՝ Յովա-
կիմ Սիւրա:

Նճաւ յամին 1771 Վահօր քաղ-
քին մօտ Պասդիա ըսուած աւանը. և
էր որդի պանդոկապետի մը կամ ըստ ու-
մանց աղքատ հողագործի: Իր առջի ուս-
մունքները լամբնցընէլէն ետքը՝ ծնողքը
զինքը Վուլուզի եկեղեցական դպրոցը
դրին իբրև քահանայացու. սակայն այդ
վիճակը իրեն բերմանը անյարմար գա-
լով՝ քանի մը տարիէն գինուորական
կենաց ետեէ եղաւ, որուն մէջ մեծա-
պէս յառաջացաւ քան զիւր գինուորա-
կիցները իր նախընթաց ըրած ուսմանցը
պատճառաւ: Վախ կամաւոր գինուոր
գրուեցաւ որսորդաց գնդի մը մէջ, և
քիչ ետքը գաղղիական խռովութիւնը ծա-
գելով՝ մեծ եռանդեամբ անոր կուսա-
կից եղաւ: Վիչ ետքը որսորդաց գնդին
մէջ տեղապահ սպայ անուանեցաւ. և
թէպէտ ինքը կարծեօք եռանդուն հա-
սարակապետական էր, այսու ամենայ-
նիւ բաւական նեղութիւն քաշեց Ռու-
պէսբիեօի ձեռքէն. բայց Վալէնիաքին
պաշտպանութեամբը մեծ վնաս մը չը-